

ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 13

Հաճախորդի հավատարմության ծրագրեր

Հղումներ

- ՀՀՄՄ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»
- ՀՀՄՄ 18 «Հասույթ»
- ՀՀՄՄ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»
- ՖՀՄՄ 13 «Իրական արժեքի չափումը»

Նախադրյալներ

1. Հաճախորդների հավատարմության ծրագրերի օգնությամբ կազմակերպությունները խթանում են հաճախորդներին, որպեսզի վերջիններս գնեն իրենց ապրանքները կամ ծառայությունները: Եթե հաճախորդը գնում է ապրանքներ կամ ծառայություններ, ապա կազմակերպությունը հաճախորդին շնորհում է պարգևի կրեդիտային միավորներ (որոնք հաճախ կոչվում են «միավորներ»): Հաճախորդը կարող է մարել այդ պարգևի կրեդիտային միավորներն այնպիսի պարգևներով, ինչպիսիք են անվճար կամ զեղչված գներով ապրանքները կամ ծառայությունները:
2. Ծրագրերը գործում են բազմաթիվ ձևերով: Կարող է պահանջվել, որ հաճախորդները կուտակեն որոշակի նվազագույն քանակի կամ արժեքի պարգևի միավորներ, որպեսզի իրավունք ձեռք բերեն դրանք մարելու: Պարգևի միավորները կարող են կապված լինել առանձին գնումների կամ գնումների խմբերի հետ, կամ որոշակի ժամանակաշրջանի ընթացքում շարունակվող գնումների հետ: Կազմակերպությունն ինքը կարող է իրականացնել հաճախորդի հավատարմության ծրագիրը կամ կարող է մասնակցել երրորդ կողմի իրականացրած ծրագրին: Առաջարկված պարգևները կարող են ներառել կազմակերպության կողմից մատակարարվող ապրանքներ կամ ծառայություններ և/կամ երրորդ կողմից ապրանքներ կամ ծառայություններ պահանջելու իրավունքներ:

Գործողության ոլորտը

3. Սույն Մեկնաբանությունը կիրառվում է հաճախորդների հավատարմությանն ուղղված պարգևի միավորների նկատմամբ, որոնք՝
 - ա) կազմակերպությունը շնորհում է իր հաճախորդներին որպես վաճառքի գործարքի, այսինքն՝ ապրանքների վաճառքի, ծառայությունների մատուցման կամ հաճախորդի կողմից կազմակերպության ակտիվների օգտագործման գործարքի մի մաս.
 - բ) հավելյալ պայմաններ, եթե այդպիսիք կան, բավարարելու դեպքում հաճախորդները կարող են հետագայում մարել անվճար կամ զեղչված գներով ապրանքներով կամ ծառայություններով:

Մեկնաբանությունը դիտարկում է, թե ինչպես պետք է հաշվառվեն կազմակերպության կողմից իր հաճախորդներին շնորհվող պարգևի միավորները:

Հարցադրումները

4. Սույն Մեկնաբանությունում դիտարկվող հարցադրումներն են.
 - ա) արդյոք ապագայում անվճար կամ զեղչված ապրանքներ կամ ծառայություններ («պարգևներ») տրամադրելու գծով կազմակերպության պարտականությունը պետք է ճանաչվի և չափվի հետևյալ կերպ՝
 - (i) վաճառքից ստացված կամ ստացվելիք հատուցումների որոշ մասը վերագրելով պարգևի միավորներին և հետաձգելով հասույթի ճանաչումը (կիրառելով ՀՀՄՄ 18-ի 13-րդ պարագրաֆը). կամ

- (ii) պարզևները տրամադրելու գնահատված ապագա ծախսումները պահուստավորելով (կիրառելով ՀՀՄՍ 18-ի 19-րդ պարագրաֆը).
- բ) Եթե հատուցման մի մասը վերագրվում է պարզևի միավորներին, ապա՝
 - (i) որքան գումար պետք է վերագրվի.
 - (ii) երբ պետք է հասույթը ճանաչվի.
 - (iii) Եթե երրորդ կողմն է տրամադրում պարզևները, ապա ինչպես պետք է հասույթը չափվի:

Փոխհամաձայնություն

5. Կազմակերպությունը պետք է ՀՀՄՍ 18-ի 13-րդ պարագրաֆը կիրառի և պարզևի միավորները հաշվառի որպես այն վաճառքի գործարքի (գործարքների) առանձին նույնականացվող բաղկացուցիչ, որի ժամանակ դրանք շնորհվել են («սկզբնական վաճառք»): Սկզբնական վաճառքի գծով ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը պետք է բաշխվի (վերագրվի) պարզևի միավորներին և վաճառքի այլ բաղկացուցիչներին:
6. Պարզևի միավորներին բաշխված հատուցումը պետք է չափվի իրենց իրական արժեքի հիման վրա:
7. Եթե կազմակերպությունն ինքն է տրամադրում պարզևները, ապա այն պետք է պարզևի միավորներին բաշխված հատուցումը ճանաչի որպես հասույթ, երբ պարզևի միավորները մարվեն, և այն կատարի պարզևներ տրամադրելու գծով իր պարտականությունները: Ճանաչված հասույթի գումարը պետք է հիմնված լինի հատուցումներով մարված պարզևի միավորների քանակի վրա՝ հարաբերաձայն այն ընդհանուր թվին, որի մարումն ակնկալվում է:
8. Եթե երրորդ կողմն է տրամադրում պարզևները, ապա կազմակերպությունը պետք է գնահատի՝ արդյոք ինքն իր անունից է հավաքում է պարզևի միավորներին բաշխված հատուցումը (այսինքն՝ որպես պրինցիպալ գործարքում), թե երրորդ կողմի անունից (այսինքն՝ երրորդ կողմի գործակալ):
 - ա) Եթե կազմակերպությունը հատուցումը հավաքում է երրորդ կողմի անունից, ապա այն պետք է՝
 - (i) չափի իր հասույթը որպես իր անվամբ մնացած գուտ գումար, այսինքն՝ պարզևի միավորներին բաշխված հատուցման և պարզևներ տրամադրելու համար երրորդ կողմին վճարվելիք գումարի միջև տարբերությունը.
 - (ii) ճանաչի այս գուտ գումարը որպես հասույթ, երբ երրորդ կողմը դառնում է պարտավորված տրամադրելու պարզևներ, և իրավասու՝ ստանալու հատուցում՝ դա անելու համար: Այս դեպքերը կարող են տեղի ունենալ այն ժամանակ, երբ պարզևի միավորները շնորհվեն: Կամ, եթե հաճախորդը կարող է որոշել պարզևները պահանջել կամ կազմակերպությունից, կամ երրորդ կողմից, ապա այս դեպքերը կարող են տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ հաճախորդը որոշի պարզևները պահանջել երրորդ կողմից:
 - բ) Եթե կազմակերպությունն իր անունից է հավաքում հատուցումը, ապա այն պետք է չափի իր հասույթը որպես պարզևի միավորներին բաշխված համախառն հատուցում և ճանաչի հասույթը, երբ այն կատարի պարզևների հետ կապված իր պարտականությունները:
9. Եթե որևէ պահի ակնկալվում է, որ պարզևները տրամադրելու պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցելու են դրանց համար ստացված կամ ստացվելիք հատուցումը (այսինքն՝ որպես հասույթ դեռևս չճանաչված սկզբնական վաճառքի ժամանակ պարզևի միավորներին տեղաբաշխված հատուցումը՝ գումարած հետագայում ցանկացած հատուցում, որը ենթակա է ստացման, երբ հաճախորդը մարի պարզևի միավորները), ապա կազմակերպությունն ունի անբարենպաստ պայմանագիր: Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ գերազանցող մասի գծով պետք է ճանաչել պարտավորություն: Պարզևներ տրամադրելու ակնկալվող ծախսումները կաճեն, օրինակ, եթե կազմակերպությունը վերանայի իր ակնկալիքները պարզևի միավորների քանակի առումով, որոնք պետք է մարվեն:

Ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ

10. Կազմակերպությունը պետք է սույն Մեկնաբանությունը կիրառի 2008 թվականի հուլիս 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը սույն Մեկնաբանությունը կիրառի նախքան 2008 թվականի հուլիսի 1-ը սկսվող ժամանակաշրջանի համար, ապա այն պետք է բացահայտի այդ փաստը:
- 10Ա. 2010թ. մայիսին հրապարակված «ՖՀՄՄ-ներում բարելավումներ» փաստաթուղթը փոփոխել է պարագրաֆ ԿՈՒ2-ը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունը 2011թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է փոփոխությունը ավելի վաղ ժամանակաշրջանների համար, պետք է բացահայտի այդ փաստը:
- 10Բ. 2011թ. մայիսին հրապարակված ՖՀՄՄ 13-ը փոփոխել է 6-րդ և ԿՈՒ1-ԿՈՒ3 պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՄ 13-ը:
11. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն՝ համաձայն ՀՀՄՄ 8-ի:

Հավելված

Կիրառման ուղեցույց

Այս Հավելվածը սույն Մեկնաբանության անբաժանելի մասն է:

Պարզևի միավորների իրական արժեքի չափումը

ԿՈՒ1 Փոխհամաձայնության 6-րդ պարագրաֆը պահանջում է, որ պարզևի միավորներին բաշխված հատուցումը չափվի իրենց իրական արժեքի հիման վրա: Եթե նույնական պարզևի միավորների համար չկա գնանշված շուկայական գին, ապա իրական արժեքը պետք է չափվի գնահատման մեկ այլ մեթոդի օգտագործմամբ:

ԿՈՒ2 Կազմակերպությունը կարող է պարզևի միավորների իրական արժեքը չափել այն հատուցումների իրական արժեքի հիման վրա, որով դրանք կարող էին մարվել: Պարզևի միավորների իրական արժեքը չափելիս, ըստ անհրաժեշտության, հաշվի են առնում՝

ա) գեղջերի և խթանների գումարը, որը այլապես կառաջարկվեր սկզբնական վաճառքից պարզևի միավորներ չվաստակած հաճախորդներին, ովքեր դեռ չեն վաստակել պարզևի միավորներ սկզբնական վաճառքից.

բ) պարզևի միավորների այն մասը, որոնք, ինչպես ակնկալվում է, չեն մարվելու հաճախորդների կողմից:

գ) չկատարելու ռիսկը:

Եթե հաճախորդները կարող են ընտրություն կատարել մի շարք տարբեր պարզևների միջև, ապա պարզևի միավորների իրական արժեքը արտացոլում է առկա պարզևների իրական արժեքները՝ կշռված յուրաքանչյուր պարզևի ակնկալվող ընտրության հաճախականությունների համամասնությամբ:

ԿՈՒ3 Որոշ հանգամանքներում կարող են օգտագործվել գնահատման այլ եղանակներ: Օրինակ՝ եթե երրորդ կողմն է տրամադրելու պարզևները, իսկ կազմակերպությունը վճարում է այդ երրորդ կողմին իր շնորհած յուրաքանչյուր պարզևի միավորի համար, ապա այն կարող է պարզևի միավորի իրական արժեքը չափել այն գումարի հիման վրա, որ կազմակերպությունը վճարում է երրորդ կողմին՝ ավելացնելով շահութաբերության ողջամիտ հավելագին: Անհրաժեշտ է դատողություն՝ ընտրելու և կիրառելու համար այն գնահատման եղանակը, որը կբավարարի փոխհամաձայնության 6-րդ պարագրաֆի պահանջները և կլինի ամենահամապատասխանը տվյալ հանգամանքներում: